

2881

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՀԱՅ ԻՐԱԿԱԳԻՏԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ



Կ. ՊՈԼԻՍ

1918

54(47.925)

2-24

№ 629. ԵՎ

34 (47-925)



2-24

Կ Ա Ն Ո Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅ «ԻՐԱՒԱԳԻՏԱՅ» ՄԻՈՒԹԵԱՆ

1918



Յօդուած 1. Կ. Պոլսոյ մէջ կազմուած է Հայ Իրաւգիտաց Միութիւն մը, նպատակ ունենալով երեւան բերել Հայ ազգին վերաբերեալ ընդհանուր շահերու իրաւական հիմերը, ցոյց տալ այդ շահերը ձեռք բերելու օրինական միջոցները և սատարել անոնց գործադրութեան:

Այդ շահերն են

- Ա. Հայ քաղաքական բանտարկեալներու, արգելափակեալներու, առեւանգեալներու, կրօնափոխութեան ենթարկուածներու, արտորականներու և տարագրուածներու ազատումն ու վերադարձը:
- Բ. Հայ որբերու հաւաքումն ու պատսպարումը:
- Գ. Յափշտակուած գոյքերու վերստացումը:
- Դ. Անհետացողներու և սպանուածներու ժառանգութեանց հատուցման պահանջը:
- Ե. Անհատական և ազգին կալուածներու և այլ գոյքերու վերագրումը:

2011

(8624-56)

23795-60

2. Ազատագրութեանց ինդիւններու ուսումնասիրութիւնը :

է. Ամէն տեսակ վնասուց փոխարինութիւնը և այլ վիճիւնանց պահանջումը :

Յօդ. 2 Միութիւնը կը գործէ իր վարչական խորհուրդին միջոցաւ և կ'օժանդակէ Ազգային զերագոյն իշխանութեան :

ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆ

Յօդ. 3. Միութիւնս երեք տեսակ անդամներ կունենայ :

Ա. Որեւէ իրաւագիտական վարժարանէ չըբջանաւարտ և կամ Օսմ. դատարաններու առջեւ ըստ օրինի արտօնեալ իրաւագէտները :

Բ. Պետական գործօն ծառայութենէ ելլող պաշտօնեաները :

Գ. Արտաւարտ անդամները, ասոնք կ'ընտրուին որեւէ դատակարգիանհատներէ որոնք նշանաւոր և օգրուակար ծառայութիւններ մատուցած կ'լլան միութեանս :

Միութեանը կողմութիւնէն ետք նոր անդամակցութեան ընտրելութիւնը տեղի կունենայ վարչական խորհրդոյ և կամ հինգ հոգիի կողմանէ եղած առաջարկի վրայ, յետ քննութեան :

Յօդ. 4. Հասարակ յանցանքով կամ ոճիրով վերջնականապէս դատարարուած և ինչպէս և ազ-

գային իրաւանց հետադ, կամ վնասակար աբարքի մէջ գտնուող անձինք չեն կրնար անգամ ընդունուիլ, և եթէ ընդունուած են՝ անադատակցութենէ կը զրկուին առժամայէս կամ մշտնջենապէս ընդ. ժողովոյ գաղտնի քուէով, ըստ առաջարկութեան վարչական խորհրդոյ կամ տասն անդամեբու :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Յօդ. 5 Ընդհանուր ժողովը անդամոց մեծամասնութեամբ նիստ կը գումարէ երեք ամիս մի անգամ, և նախ մէկ պարուան համար գաղտնի քուէարկութեամբ կ'ընտրէ իւր դիւանը, ա. և բ. տեսնապետը, և ա. և բ. ատենադպիրը : Դիւանը վերընտրելի է չըջան աւարտելէ յետոյ :

Ընդհանուր ժողովը կրնայ արտասովոր գումարուիլ վարչական խորհրդոյ հրաւերով և կամ տար անդամներու գրաւոր պահանջումով :

Իւր աշխատութիւններն են

Ա. Ընտրութիւն վարչական խորհրդոյ ինչպէս և անոր պակսած անդամներու եթէ երկուքէ աւելի ըլլայ անոնց թիւը :

Բ. Քննութիւն վարչական խորհրդին և կամ տասն և հինգ անդամներու կողմանէ ներկայացուած ինդիւններու :

Գ. Ընտրութիւն հաշուեքննիչ մասնախումբի :

Դ. Քննութիւն վարչական խորհրդի համարա-
տուութեան :

Ե. Վաւերացում միութեան հաշուեցոյցին և
ելլիւմուտքին

Յօդ. 6. Եթէ հիստի մը ներկայ եղող անդա-
մոց թիւն օրինական մեծամասնութիւն չունենայ,
աջորդ անդամուան նիստն օրինաւոր և որոշումները
վաւերական կը նկատուին ինչ որ ալ ըլլայ ներկայ-
ւոյ թիւը :

Յօդ. 7. Վարչական խորհուրդը և այլ ո և է
անդամ իրաւունք չունի քուէ տալու, երբ իրենց
վերաբերեալ գանդատի մը և կամ հաշուական
խնդրոյ մը համար ժողովին կամքն հասկնալ պէտք
ըլլայ :

Յօդ. 8. Կանոնագրի փոփոխութեան կամ մի-
ութիւնը լուծելու համար անդամակիցներուն երեք
չորրորդ քուէներու մեծամասնութիւնը պէտք է :
Միութիւնը լուծեալ կը հռչակուի անդամներուն
երեք չորրորդին հրաժարումով :

Յաջորդաբար և առանց բանաւոր պատճառ
երեք անգամ բացակայ եղող անդամները հրաժար-
ուած կը նկատուին :

Յօդ. 9 Ընդհանուր ժողովը կանոնաւորապէս
նիստի կը հրաւուրուի իւր ղեկանին կողմանէ երեք
օր առաջ հրատարակուած կոչով մը :

Յօդ. 10 Վիճարանութեանց կանոնաւորութիւնը
խանդարողները, նախ ի կարգ կը հրաւուրուին և

երկրորդ անգամ նոյն նիստին մէջ խօսելու իրաւ-
ունքը կը կորսնցնեն :

ՎԱՐՉԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԲԴ

Յօդ. 11. Վարչական խորհուրդը կ'ընտրուի
մէկ տարուան համար վերընտրելի ըլլալու պայման աւ-
ընդհանուր ժողովի գաղտնի և մեծամասնութեան
քուէով, և կը բաղկանայ եօթ անդամներէ :

Յօդ. 12. Վարչական խորհուրդ իւր մէջէն
կ'ընտրէ իւր ղեկանը, գահապետը, համարակարը
և գոյքապահը :

Յօդ. 13. Վարչական խորհուրդ կը գումարուի
չաբաթը մէկ անգամ :

Յօդ. 14. Աշխատութեան բաժանման ղեկա-
րունքին համաձայն, վարչական խորհուրդը միու-
թեան անդամոց մէջէն իւրաքանչիւրը առնուազն
Յ. 5 անձերէ բաղկացեալ մասնախումբեր կ'ընտրէ
հետեւեալ աշխատութիւնները կատարելու համար :

- Ա. Աւելանդումներու մասնախումբ .
- Բ. Տարագրուածներու »
- Գ. Կրօնախօյններու »
- Դ. Բանտարկեալներու »
- Ե. Արգելախակեալներու »
- Զ. Ապահովագրութեանց »
- Է. Անշարժ կալուածոց »

- Ը. Յափշտակեալ գոյքից »
- Թ. Սպանուածներու »

և և ի հարկին ուրիշ մասնախուժմբեր :

Մասնախուժմբերու գործաւնութեանց արդիւնքը կը ներկայեանայ վարչական խորհրդոյ, որ եթէ պէտք տեսնէ, որ և է խնդրոյ մասին կը խորհրդակցի անոնց հետ իրենց գործաւնութեանց վրայ :

Մասնախուժմբերը իրենց յանձնուած աշխատութիւնները յառաջ կը տանին վարչական խորհրդի ընդհանուր հրահանգին համաձայն և իրաւամտութիւն ունին ո և է միջոցով ձեռք բերել տեղեկութիւններ և ազայոյցներ, առ այդ յարաբերութիւններ հաստատելով այլ և այլ մարմիններու հետ :

Յօդ. 15. Ընդհանուր ժողովին առջեւ վարչական խորհուրդը վեց ամիս անգամ կը ներկայացնէ իւր համարատուութիւնը, որու մաս կը կազմէ մասնախուժմբերու գործունէութեանց արդիւնքներ կայացնող տեղեկագիրները :

Յօդ. 16. Մասնախուժմբերը վարչական խորհրդին պաշտօնաւարութեան շրջանին չափ կը վարեն իրենց պաշտօններ և վերընտրելի են :



ՀԱՍՈՅԹՆԵՐ

Յօդ. 17. Միութիւնը կ'ունենայ սովորական և արտասովոր հասոյթներ :

Սովորական հասոյթներն են անդամոց մուտքի կամաւոր տուրքը և պարբերական վճարումները, որոց նուազագոյն չափ ամսական կէս ոսկի է : Առանց բանաւոր արդելքի երեք ամիս ամսավճար չ'ընողները, միութեանէն հրաժարուած կը նկատուին :

Միութեանս հասոյթների մաս կը կազմեն նաև նոէրներ և նպատակներ զանազան կողմերէ զրկուած :

Յօդ. 18 Միութեանս լուծման պարագային, անոր բոլոր գոյքերը Պոլսոյ Հայ Պատրարքարանի կը յանձնուին իբր սեփականութիւն Ազգային Կրթոյն իշխանութեան :



12881

7

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հայաստանի Գրադարանի Գրադարանային
 համակարգի օգնությամբ հասանելի է
 դարձնում իր ֆոնդի ամբողջական
 ցանկը, որի մասին տեղեկություններ
 կարելի է ստանալ համակարգի միջոցով
 կամ օգտագործելով համակարգի օգնությունը
 համակարգի օգնությամբ հասանելի է
 դարձնում իր ֆոնդի ամբողջական
 ցանկը, որի մասին տեղեկություններ
 կարելի է ստանալ համակարգի միջոցով
 կամ օգտագործելով համակարգի օգնությունը

ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

2013

« Ազգային գրադարան



NL0046518

104